Այբբենարանի ավարտական հանդես

Հնչում է «Մաշտոցյան տառեր » երգը:

Իմ այս փոքրի՜կ-փոքրի՜կ կյանքում

Ամենամեծ տոնն է այսօր:

Այսօր վերջին էջդ եմ փակում,

«Այբբենարա՜ն» իմ փառավոր: (Եվա)

Դուք, հայերեն տառե՛ր սիրուն,

Այսօրվանից իմն եք հավետ,

Կյանքի բոլոր ճամփաներում

Միշտ էլ պիտի քայլեմ ձեզ հետ,

Ձեզնով գրեմ , ձեզնով կարդամ,

Մեծ Մաշտոցին սուրբ պարտքս տամ: (Գևորգ)

- Թանկագի՜ն հյուրեր, ուսուցիչնե՛ր և ծնողնե՛ր: Այսօր մեզ համար մեծ երջանկություն է: Մենք սովորել ենք հայոց այբուբենի տառերը: (Հ. Անգելինա)

Մենք հպարտ ենք, որ մեր երկիրը Հայաստանն է, մեր լեզուն՝ ոսկեղենիկ հայերենը:(Վարդիկ)

Իր պատմության ճանապարհին հայ ժողովուրդը շատ բան է կորցրել, բայց շատ բան էլ պահպանել է, պահպանած կարեւոր արժեքներից հայոց լեզուն է : (Արսեն)

Լսիր, որդիս, պատգամ որպես,

Սիրող քո մոր խոսքը սրտանց,

Այսօրվանից հանձնում եմ քեզ,

Հայոց լեզուն հազարագանձ☹ Պ: Անգել)

Կտրել է նա հանց աստղալույս,

Երկինքները ժամանակի,

Շառաչել է խռովահույզ,

Սլաքի հետ Հայկյան նետի: (Բ. Նարե)

Ու Մեսրոպի Սուրբ հանճարով,
Դարձել է գիր ու մագաղաթ,
Դարձել է հույս, դարձել դրոշ,
Պահել երթը մեր անաղարտ☹Վազգեն)

Նրանով է մայրս ջահել
Ինձ օրորոց դրել մի օր,
Հիմա եկել մեզ է հասել
Նրա կարկաչը դարավոր☹Ա. Անգելինա)

Պահիր նրան բարձր ու վճիտ,
Արարատի Սուրբ ձյունի պես,
Պահիր նրան սրտիդ մոտիկ,
Մեր պապերի աճյունի պես☹ Դմիտրի)

Ու տես, որդիս, ուր էլ լինես,
Այս լուսնի տակ ուր էլ գնաս,
Թե մորդ անգամ մտքից հանես,
Քո մայր լեզուն չմոռանաս:(Լիկա)

Չորրորդ դարի երկինքը սև
Հանկարծ մի պահ ծիածանվեց,
Հրաշափայլ հենց այդ պահին
Հայոց հողում Մեսրոպ ծնվեց: (Մեսրոպ)

ԵԻ Տարոնի հին գավառում՝
Հացեկացում ցորենաղբյուր,
Շինականի պարզ սեղանին
Ցնծաց գինին անուշաբույր:(Լիլի)

Հայրը ուսման ճամփեց նրան,
Ու Մաշտոցը գնաց, շրջեց,
Մուշից անցավ Վան ու Սասուն,

Զգաց՝ լեզուն ազգապահպան: (Հարություն)

Կամա՛ց-կամա՛ց հեռանում է:
Տեսավ՝ թխաչ մանուկն ահա
Ազգանունը մոռանում է,
ԵԻ ազգն այսպես անօգնական
Կրակի մեջ աղանձվում է: (Գայանե)

«Միայն գի՛րը, գի՛րը, -
Բոցավառվեց Մաշտոցն հանկարծ,-
Միայն գի՛րը պիտի հաղթի
Այս խավարին ազգահալած»: (Պ. Նարե)

Հազար վեց հարյուր տարի է անցել
Հայոց տառերի ստեղծման օրից,
Ո՛չ ծերացել է, ո՛չ հնացել,
Ճշմարիտն ասած , շատ է նորացվել:(Ալբերտ)

Երգ՝ « Մեսրոպ Մաշտոց աղոթեց » :

Ամպն անձրևեց առատ-առատ,
Արտը աճեց ամպից արագ,
Արտը աճեց՝ աչքն արևին,
Արմատները՝ անձրևներին: (Արման)

Բառը ՝ բառին, բառը՝ բառին՝
Բառաշար է , բառարան.
Բադիկ, բազուկ, բաժակ, բարդի...
Բազում բառեր բազմազան: (Բ. Նարե)

Գագիկը գրախանութ գնաց,
Գեղեցիկ գրքեր գնեց,
Գնած գրքերը գրկած՝
Գագիկը գոհ-գոհ գնաց: (Գայանե)

Դեղձը դիմեց դդումին.
-Դերասա՞ն ես, ա՛յ դդում,
Դեղին դիմակ ես դրել,
Դայլայլում ես, դմբդմբում.
Դեղձանի՞կ ես, թե՞ դդում: (Դմիտրի)

Երվանդը երգիչ է,
Երգում է երջանիկ,
Երգերը երամ- երամ
Ելնում են երկինք: (Եվա)

Զարթուցիչի զվարթ զանգը
Զի՛լ զնգզնգաց,
Զարթուցիչի զիլ զնգոցից
Զորին զարթնեց զայրացած: (Արտյոմ)

Է-ից՝ էջ ու էջմիածին,
Է-ից ՝ Էմին, Էրեբունի,
Է-ից՝ էժան, էժանություն,
Է-ից ՝ էակ ու էություն: (Գ. Նարեկ)

Ընձուղտները
Ընտանիք են ընթերցասեր,
Ընթերցում են ընթերցարան,
Ընդմիջմանը՝ ընկերներով
Ըմպում ընտիր ըմպելիք: (Ա. Անգելինա)

Թիթեռնիկները թռան թփերից,
Թափահարելով թևերը թավիշ:
Թղթե թագուհին թողեց
Թագավորին թղթե,
Թռավ թիթեռնիկներից թեթեւ: (Սարգիս)

Ժամապահի ժամացույցը ժանգոտվել է,
Ժպտերեսիկ Ժիրայրիկը ժամագործ է,
Ժիր ժպտալով ժամապահին
Ժամացույցը ժանգազերծեց:(Արսեն)

Իրիկուն է, իրիկնաժամ,
Իր ինքնաշեն
Ինքնաթիռով
Իշխանն իջավ Իջեւանում:(Հարություն)

Լեռնային լճում
Լուսինն է լողում,
Լու՛ռ է, լռություն:
Լուսատտիկն է
Լճափին լալիս : (Լիկա)

Խավարասեր խլուրդը
Խնամի է խխունջին,
Խոհանոցում խմում են,
Խոսում, խաղում խնջույքին: (Լիլի)

Ծովը ծփում է ծուփ – ծուփ,
Ծիածան է ծնվում ծովից,
Ծիծաղում է ծովը ծուփ-ծուփ,
Ծաղիկներ են ծնվում ծովից: (Ալբերտ)

Կովից կաթը կկթեն,
Կարոն կաթը կխմի,
Կովը կայտառ կգնա,
Կարոն կայտառ կմնա: (Պ. Նարե)

Հայկը հուր է, հրեղեն,
Հայկը հող է, հողեղեն,
Հայկը՝ հերոս հաղթական,

Հայկը՝ հրաշք հայկական: (Հ. Անգելինա)

Ձյուն է, ձմեռ, ձյունաբուք
Ձանձրացել են ձի ու ձուկ,
Ձնծաղիկը ձյունածածկ, ձեռնարկել է ձյունահալք: (Գ. Նարեկ)

Ղու՛-ղո՛ւ՝ ղուղու,
Ղունղունոց,
Ղո՛-ղո՛՝ ղողանջ,
Ղողանջյուն,
Ղեկ-ղեկ՝ ղեկորդ,
Ղեկավար: (Բ. Նարե)

Ճաշարանում մի ճագար
Ճակնդեղ է ճաշակում,
Ճկված ճյուղն է ճոճանակ՝
Ճայն է ճյուղին ճկճկում:
Ճնճղուկը ճյուղից-ճյուղ
Ճռվողում է, ճլվլում: (Վարդ)

Մռռանը մտավ մառանը.
Մուկն էլ մտավ մառանը.
Միասին մաքրեցին մառանը .
Մնաց միայն մռռանը : (Մեսրոպ)

Յոթգլխանի, յոթնաչքանի,
Յոթթևանի, յոթոտնանի
Յոթնավիշապը
Յուղածաղկով
Յոթնալեզուն է յուղում : (Գևորգ)

Նկարիչ է Նաիրին,
Նայում է նոր նկարին.
Նկարել է նավաստի՝

Նման է նապաստակի:(Սարգիս)

Շինարար է Շավարշիկը,
Շնաբույն է շինում,
Շնորհակալ է շեկ շնիկը.
Շնապոչիկն է շարժում : (Եվա)

- Ողջո՛ւյն, ողջո՛յն,

Որսորդ ոզնի,
Ո՞րդ ես որսում
-Ո՛չ, ողկույզներ
Ոսկեհատիկ: (Արտյոմ)

Չանես չարիք, չարություն,
Չնչին չարչի չդառնաս,
Չանես չկամ չեմ սիրում,
Չլինես չար չաչանակ: (Հարություն)

Պարտիզպան է Պարույր պապը,
Պարծենում է պարտեզի
Պտուղներով պեսպիսուն,
Պարգևում է պտուղները
Պարսամին ու Պերճուհուն: (Վազգեն)

Ձրերը ջինջ են ու ջերմիկ,
Ձրերում ջրաշուշանները
Ձահեր են ջրասույզ,
Ձրահարսերը ջրաստղեր են՝
Ձրավարս ու ջրասուն: (Գայանե)

Ռուբենի ռոբոտը
Ռազմիկ է ռազմավար,
Ռմբակոծում է ռազմանավը
Ռումբերով ռազմական : (Ռաֆայել)

Սիրուն Սոնան սրթսրթալով,
Սահում է սարից սարսռում,
Սանասարը սրտատրոփ
Սահնակին է սպասում: (Սոնա)

Վագր «վարժեցնող»
Վեցամյա Վահեն
Վախեցավ վազող
Վտիտ վառեկից: (Վոլոդյա)

Տաթևիկի տիկնիկը
Տխուր է ու տրտում.
Տատիկը Տաթևիկին
Տաթև է տանում: (Տիգրան)

Ռոպեասլաքը
Ռոպե առ ռոպե
Ռոպեաչափ է,
Ռոպեացույց: (Արման)

Ցոլակը ցատկեց
Ցից ցանկապատից,
Ցանկապատը ցնցվեց
Ցոլակի ցատկից: (Վարդիկ)

Ուղտապանը ուշի-ուշով
Ուղտերեն է ուսանում
Ու ուզում է ուղտաձագին
Ուղտալեզու ուսուցանել: (Պ. Անգելինա)

Փայտփորիկը փչակ փորեց,
Փայտահատի փոքրիկ փիսոն
Փը՛ռ -փռշտաց,

Փայտփորիկը փախավ, փրկվեց
Փոթորկալից փռշտոցից : (Դմիտրի)

Քամին քայքայում է քարը,
Քամին քշում է քարափոշին,
Քամին քարայր է քանդակում,
Քամին քնում է քարայրում: (Ա. Անգելինա)

Օրին « օդաչու » է.
Օրորվում է օրորոցում,
Օգսեն Օրու օգնականն է.
«Օդանավն» է օրորում: (Լիկա)

Ֆրանսիացի Ֆիլիպը
Ֆուտբոլիստ է ֆանտաստիկ,
Ֆիզիկոս է Ֆինն Ֆրանկը,
Ֆիդայի է Ֆրիկը : (Սոնա)

Երգ՝ « Տառերը պես- պես»

Մեր մեծ գիտնական ու հայրենասեր
Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայերենի տառերը,
Որ մեր լեզուն, մեր երկիրն ու մեր հոգին հայկական
Աշխարհային հողմերի դեմ մնային կանգուն մշտական: (Վազգեն)

Քո ձեռքով ստեղծված հայոց գրերով
Քո անունն ենք կերտում ոսկե տառերով
ԵՒ այսօր , ահա՛, այս մեծ հանդեսին
Հայերեն լեզվով երդում ենք տալիս,
Որ անունը քո՝ մեծն Մաշտոցիդ,
Հուշերում մարդկանց երբեք չխամրի:(Վարդիթեր)

Կյանքի անունից ու արեգակի
Երդում ենք տալիս աշակերտական,

Որ ամեն տարի քո հիշատակին
Ծաղիկներ դնենք թարմ ու անթառամ:(Ռաֆայել)

Դպրոցը հայոց Մաշտոցն է բացել
Ու դարձել առաջին ուսուցիչը մեր:
Այդ օրվանից եկել- անցել են դարեր,
Ջնջվել են գրեր, կորել ողջ ազգեր,
Բայց հայն է հավերժել ու միշտ արարել:(Արտյոմ)

Գրերը մեր երկաթագիր,
Մեծ Մաշտոցի ձեռքով գրված,
Դարեր շարունակ եղան լույսի, հույսի սյուներ,
Ազգը պահող, լուսավորող անմար ջահեր:(Գայանե)

Ճամփաներով այս «Այբ»-ի, «Բեն»-ի
Որքա՜ն մարդիկ են քայլել ու անցել,
Այսօր էլ մենք ենք մի քայլ կատարել՝
Այբբենարանին հրաժեշտ տվել:(Ալբերտ)

Պար՝ « Խաղաղություն»:

Հարգելի՛ հյուրեր, ժպտացե՛ք, որովհետև խաղաղությունը սկսվում է ժպիտից:

Խաղաղություն ամենքի՛ն և ամենո՛ւր,-
Այդ ենք միայն մենք աշխարհին կամենում: (Պ. Անգելինա)

Խաղաղությո՛ւն, որ խաղողը քաղցրանա,
Որ նորատունկ այգին տա բերք ու բարիք:
Խաղաղությո՛ւն, որ աչիկներն իր բանա
Դաշտում մի տուղտ, օրորոցում՝ մի բալիկ☹Մեսրոպ

Խաղաղություն ամենքի՛ն և ամենո՛ւր,-
Մեզ հետ նույնը բնությունն է կամենում:
Խաղաղություն օվկիանոսն այն խաղաղ,

Որ իսկապես լինի հանգիստ ու խաղաղ:
(Նարեկ)

Խաղաղությո՛ւն, որ տատիկները բոլոր
Երգեն իրենց թոռնիկներին մեղմ օրոր.
Որ մայրերը և արտերը ծոցվորվեն,
Որ դաշտ ու ձոր հասունություն վար ծորեն:(Հ. Անգելինա)

Որ բանվորը գոհանա իր վաստակով,
Շինարարը երկինք ելնի լաստակով,
Սերմնացանը ափն իր խփի ու բանա,
Այգեգործը դեռ չխմած՝ արբենա...
(Տիգրան)

Խաղաղություն բոլո՛ր նրանց, ում համար
Ծանր է տեսնել սգավոր կին, քույր ու մայր,
Ծանր է տեսնել իր քաղաքը մոխրացած,
Այգին դարձած խրամատի անել ցանց...(Պ. Նարե)

Խաղաղությո՛ւն: Ո՞վ է կռիվ կամենում,-
Լոկ այս հարցն է, որ հնչում է ամենուր: (Վոլոդյա)

Պատասխանը միևնույնն է ամեն տեղ.
-Ո՛չ,- ասում է ամեն երկիր, ամեն ցեղ:
-Ո՛չ,- հնչում է ամեն լեզվով՝ մի բառով:
-Ո՛չ,- հնչում է կերտող մուրճի բարբառով: (Սոնա)

Այգին ջրող բահը նույնն է պահանջում,
Նույնն է տենչում զուլալ հոսող ամեն ջուր,
Նույնն է ճչում ամեն մանուկ նորածին:(Լիլի)

Խաղաղություն ամենքի՛ն և ամենո՛ւր,-
Ողջ աշխարհն է ողջ աշխարհին կամենում☹Վոլոդյա)

Դուք մեզ լսու՞մ եք, մենք ձեզ չենք խնդրում՝ այլ պահանջում ենք խաղաղություն:

Երգ « Խաղաղություն »

Խաղաղություն իմ Արցախին,
Իմ պապական ղաշանգ շեմին,
Պարզ ճրերեն, սորփ խաչերեն,
Խաղաղությանը մատաղ իլած հոգիներեն: (Արսեն)

Հայրենի տուն է,
Երջանկություն է
ԵՎ անուշ քուն է
Խաղաղությունը: (Տիգրան)

Բարևող ձեռք է,
Ծփացող բերք է
ԵՎ քաղցր երգ է
Խաղաղությունը☹Գևորգ)

Նոր օրորոց է,
Գիրք ու դպրոց է
ԵՎ թոնրի բոց է
Խաղաղությունը☹Արման)

Գուրգուրող մայր է,
Քույր ու եղբայր է,
Հոգատար հայր է
Խաղաղությունը: (Սարգիս)

Կանաչ ճամփա է,
Կապույտ երկինք է
ԵՎ հայրենիք է
Խաղաղությունը:

Երգ՝ « Ապրել խաղաղ», որի ներքո թևերից կհանեն ժանյակները և կկապվեն ծառին: